

ՆՈՐԻՆ ԲԱՐՁՐ ՄՐԲԱՋՆՈՒԹԵԱՆ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՊԱՏՐԻԱՐքԻՆ ՀՈՅՈՅ Կ. ՊՈԼՍՈՅ

Տ. ՅՈՎՀԵՆՆՈՒ ՍՐԲԵԶՅԱՆ ԸԹՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՐՃԵՐՈՒՆԻՈՑ.

«Կոչնակ» շաբաթաթերթ հայոց Ամերիկայի առեալի լրագրաց տեղւոյդի թիւն իւր 6-րդ, որ ի 10 փետրուարի տարւոյս (եր. 151), ի գիտութիւն հայոց Ամերիկայի հրատարակեալ է զբաց նամակ վեհաշնորհ կաթուղիկոսի տանն կիլիկիոյ Տ. Սահակայ, զուղղեալն առ Կիլիկեցի հայու:

Բնթերցեալ զայն նամակ Սրբադան կաթուղիկոսին ի վիշտ համակեցաք, զի նորին Սրբութիւն ի կիր արկեալ էք զանպատշաճ ակնարկութիւնս և դարձուածս բանից առ հոգեոր վարչութիւն ընդհանրապէս, առ Տեղակալ ընդհանրական Հայրապետի և առ Տեղապահ Պատրիարքի Հայոց Կ. Պօլսոյ՝ ի մասնաւորի, որք նախանձախնդրութեամբ պահպանութեան կանոնաց եկեղեցւոյ ի հարկի լեալ էին սահման դնել ոտնձգութեանց և արգելուկ զկամայական և զյախուռն գործողութիւնս Տ. Մուշեղայ եպիսկոպոսի, որ վտարանդի անկեալ յԱմերիկա՝ ի տէրունի վիճակ Մայր Աթոռոյս, յինքն յանդուցանելով զսիրտս ումանց, անտես արարեալ զհոգեոր բարձր իշխանութեամբ, և արհամարհեալ զտեղական հոգեոր օրինական վարչութիւն, ինքնազլուխ վարէր զգործս առաջնորդի վիճակին հաստատելով սեղանս, ձեռնադրելով պաշտօնեայս եկեղեցւոյ և այլն:

Ի պատճառս այս օրինակ վարմանց Տ. Մուշեղայ եպիսկոպոսի երկպառակեալ ժողովուրդն, այր զարամբ եղեալ զմիմիանս կռվէին ի ժողովս, և հոգեորականութիւնս տեղւոյն ի հալածանս և յանհնարին նեղութիւնս բողոք բառնայր առ մեզ և առ կենդրոնական վարչութիւն տեղւոյդ:

Մեք և կենդրոնական վարչութիւն տեղւոյդ ոչ կարցաք անտարբեք դտանիլ առ ցաւալի դրութիւն Հայոց Ամերիկայի—աշխարհականաց և հոգեորականաց. ուստի և զրեցաք առ որս անկ է, աղղել Տ. Մուշեղայ եպիսկոպոսի

չմիջամտել ի գործ վիճակի, որ չէ իւր. յորում ըստ եկեղեցական կանոնաց՝ չունի իրաւասութիւն ինչ:

Սրբազն կաթուղիկոսին Կիլիկիոյ և Տ. Մուշեղայ եպիսկոպոսին, որք այլովք ամենայնիւ գիտունք են, յայտնի են անշուշտ և կանոնք եկեղեցւոյ: Ա. ժողով ի Շահապիվան (յամի Տեառն 447) ի կանոնն ժգ. ասէ. «Առանց կամաց գլխաւոր եպիսկոպոսի աշխարհին, եպիսկոպոսք մի լիցին»: Ապաքէն յայտնի է, զի գլխաւոր եպիսկոպոս Հայոց Ամերիկայի է Սրբազնագոյն Հայրապետն ամենայն Հայոց, իսկ Տ. Մուշեղ եպիսկոպոս ձեռնադրեալ ի Սրբազն կաթուղիկոսէն Սսոյ վասն Կիլիկեցւոց աշխարհի, վտարանդի հասեալ յԱմերիկա, առանց կամաց գլխաւոր եպիսկոպոսի աշխարհին վարէր զգործ Առաջնորդի: Ե. ժողով ի Դուին (յամի Տեառն 645) ասէ ի կանոննն. «ա. Եպիսկոպոսն զայլոյ եպիսկոպոսի վիճակ մի յափշտակեսցէ: բ. Եպիսկոպոսն մի իշխեսցէ յայլում վիճակի սեղան հաստատել կամ քահանայ ձեռնադրել»: Բ. ժողով ի Պարտաւ (յամի Տեառն 768) սահմանէ. «բ. Եպիսկոպոսք մի իշխեսցեն ձեռնադրութիւնս առնել ի վիճակ այլոյ եպիսկոպոսի»: Բ. ժողով ի Սիս (յամի Տեառն 1243) սահմանէ. «թ. Եպիսկոպոսունք կամ երիցունք յայլոց թեմս մի իշխեսցեն կատարել զպաշտօն իւրեանց առանց հրամանի»: Վերջապէս Ա. ժողով յերուսաղէմ (յամի Տեառն 1651), յորում գտան Տ. Փիլիպպոս կաթուղիկոս ամենայն Հայոց և Տ. Ներսէս կաթուղիկոս Սսոյ, սահմանէ. «բ. Եւ որ ձեռնադրելին է, մի իշխեսցէ առ այլ կաթուղիկոս գնալ, այլ առ իւրն. դ. մի ոք յեպիսկոպոսաց յափշտակեսցէ զվիճակ այլոց. է. Եպիսկոպոս առանց հրամանի կաթուղիկոսին մի իշխեսցէ այլոց վիճակաց՝ բռնութեամք այլազգեաց»:

Կանոնքս այսոքիկ, որք սրբութեամք պահպանին յեկեղեցիս նաև այլ քրիստոնէից, եղեալ են ոչ եթէ վասն խտիր դնելոյ ի միջի եպիսկոպոսաց, ոչ եթէ վասն փեռեկտելոյ զմիութիւն եկեղեցւոյ, այլ վասն խաղաղութեան, առ ի զառաջս ունելոյ ուննձգութեանց և շփոթութեանց իս և վասն անաղարտ պահպանելոյ զմիութիւն եկեղեցւոյ

և զկարդ և զկանոնս նորին։ Իսկ Տ. Մուշեղ եպիսկոպոսը նորէմ կանոնացս գնալով, միջամտելով ի գործո վիճակի, յորում չունէր իրաւասութիւն ինչ, աղմկէր զժողովուրդն և խանգարէր զկանոնաւոր ընթացս գործառնութեան հոգակոր վարչութեան տեղւոյն։

Վեհաշնորհ Կաթողիկոսին Սոոյ պարտք էին ազդել Տ. Մուշեղայ եպիսկոպոսի և արգելս դնել յախուռն գործողութեանց նորին, սակայն նորին Սրբութիւն քաջալերիչ հանդիսանայր և վերջնով բաց նամակաւ իւրով բանս պարսաւանաց ուղղեալ առ դլխաւոր պաշտօնեայս եկեղեցւոյ ի դէմս Տեղակալացն Հայրապետի ամենայն Հայոց և Պատրիարքին Կ. Պօլսոյ, թուի թէ պառակտէ զմիութիւն եկեղեցւոյ թէև յանուն միութեան խօսիւ։

Մինչ ակն ունէաք թէ համբարձմամբ Տեառն Սահակայ յԱթոռ Կաթողիկոսութեան Սոոյ հաստատելոց է սէր և խաղաղութիւն, և տունն Սոոյ իրքե զկարեորագոյն անդամ լրութեան ազգիս սերաիւ զօդելոց է ի միութիւն՝ յամենայն իրս, և անվթար պահպանութեամբ կանոնաց, մանաւանդ սահմանելոցն ի ժողովոյն Երուսաղէմայ, վասն սիրոյ և խաղաղութեան երկուց կաթողիկոսական աթոռոց,—ցաւ ի սիրտ ասեմք, տեսաք զհակառակն.—պատճառանօք խուսափեցաւ ի մասնակցութենէ յերկուս վերջին ընտրութիւնս ընդհանրական Հայրապետի, քաջալերէ զապօրինի վարժունս Տ. Մուշեղայ եպիսկոպոսի, յարուցանէ նորանոր խնդիրս իրաւասութեան ի գործ ձեռնադրութեան եպիսկոպոսաց, յուզէ զմիտս ժողովրդեան և ուժացուցանէ ի Մայր Աթոռոյս և ի կենդրոնական վարչութենէ տեղւոյդ գրելով և տպագրելով թուղթս։

Առ վարժունս Տ. Մուշեղայ եպիսկոպոսի եթէ խօսիմք կանոնական իրաւամբք, ոչ միայն վասն այնորիկ է, զի նա եպիսկոպոս Սոոյ է, այլ և վասն այնորիկ, զի եպիսկոպոսք ընդհանրապէս չունին իրաւունս խառնիլ ի գործս այլոյ վիճակի։

Մեր արդէն գրեալ և յայտնեալ է ում անկ է, թէ, եթէ կամք են Հայոց Ամերիկայի ունել յառաջնորդ զՏ. Մուշեղ

եպիսկոպոս,—մարթէլ այդմ լինել յետ օծման ընդհանրական Հայրապետի, եթէ Նորին Սրբազնութիւն յանձն առնուցու, հաճութեամբ ձեռնադրողին իւրոյ—կաթուղիկոսին Սոոյ—և կենդրոնական վարչութեան տեղույթ, պահպանութեամբ սահմանեալ կարգաց, ըստ օրինակի երջանկայիշատակ Տ. Ներսիսի Պատրիարքի, նախապէս մտանել ի շարս Եպիսկոպոսաց Մայր Աթոռոյս, և ապա ըստ կանոնաց (ա. Շահապիվանի, յօդ. ժղ) հրամանաւ գլխաւոր Եպիսկոպոսի—այն է ընդհանրական Հայրապետի—լինել Եպիսկոպոս ի տէրունի վիճակի նորին:

Յայտնելով բարձր Սրբազնութեան Զերում զվիշտ մեր առ վարմունս Սրբազան կաթուղիկոսին Սոոյ, խնդրեմք յԱմենապատւութենէ Զերմէ ըստ պատշաճի հանգամանաց իրաց առնել՝ զոր արժան համարեցիք. զի մի հոգեոր վարչութիւնք ընդհանրական հայրապետական Աթոռոյ և պատրիարքարանիդ նաեւմասցին ի կողմանէ այնալիսւոյ վեհաստիճան պաշտօնէի եկեղեցւոյ որպիսի է կաթուղիկոսն Սոոյ, որ գիտէ զկանոնս եկեղեցւոյ և պարտի հետևող լինել նոցին վասն խաղաղութեան եկեղեցւոյ և հաստատութեան կարգաց նորին:

**Եղբայրական սիրալիր ողջունիւ և յարգանօք
մնամք աղօթակից**

Տեղակալ Կաթուղիկոսի ամենայն Հայոց

Գէորգ արքեպիսկոպոս

Ի 4-ն Մարտի 1912 ամի

թ. 2346

Ի Ա. էջմիածին: